«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՀԱՆԴԵՍԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը բոլորեց իր 80-րդ տարին: Լինելով Հայաստանի գիտությունների ակադեմիայի անդրանիկ և ամենաերկարակյաց պարբերականը՝ այն տասնամյակներ շարունակ կրել է հայ հումանիտար և հասարակագիտական մտքի ջահը, որն այսօր էլ հաջողությամբ տանում է առաջ:

Միջմասնագիտական և բազմալեզու հանդեսը հիմնադրվել է 1940 թ., նրա էջերում աճել և հասունացել են հայագետների և հասարակագետների բազմաթիվ սերունդներ: 1940-1943 թթ. պարբերականը հրատարակվել է որպես ԽՍՀՄ ԳԱ նախագահության հայկական մասնաճյուղի՝ Արմֆանի հասարակական և բնական գիտությունների «Տեղեկագիր», 1943-1965 թթ.՝ Հայաստանի ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների»: 1966 թ. ամսագիրը վերանվանվել է «Լրաբեր հասարակական գիտությունների»: 1940-1947 թթ. այն լույս է տեսել անկանոն պարբերականությամբ, 1948-1990 թթ. ունեցել է ամենամսյա, 1991 թ.՝ երկամսյա, 1992-1995 թթ.՝ եռամսյա հրատարակություն, իսկ 1996-ից առ այսօր քառամսյա պարբերական է: Տարբեր ժամանակներում «Լրաբերի» գլխավոր խմբագիրներ են եղել անվանի գիտնականներ *Հ. Օրբելին* (հիմնադիր), *Ս. Կարապետյանը, Հ. Բատիկյանը, Խ. Մոմջյանը, Մ. Ներսիսյանը, Ա. Հովհաննիսյանը, Ծ. Աղայանը, Գ. Ստեփանյանը, Հ. Ասլանյանը, Գ. Աբովը, Հ. Ինճիկյանը, Վ. Միքայելյանը, Ա. Խառատյանը:* 2017 թ. վերջից հանդեսի գլխավոր խմբագիրն է Պ. Ավետիսյանը:

Ի տարբերություն գիտական այլ՝ ավելի նեղ բնագավառներ ներկայացնող պարբերականների, «Լրաբերն» իր բնույթով միջմասնագիտական է, ընդգրկում է հասարակական և հումանիտար գիտությունների ողջ դաշտը՝ պատմություն, փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավագիտություն, քաղաքագիտություն, տնտեսագիտություն, լեզվաբանություն, գրականագիտություն, արվեստագիտություն, հոգեբանություն, մանկավարժություն, մատենագիտություն, կրոնագիտություն, ազգագրություն, բանագիտություն, հնագիտություն: Հանդեսի ծավալի էական մասն են կազմում հայագիտական ուսումնասիրությունները՝ առանց բովանդակային, ժամանակագրական և տարածական սահմանափակությունների: Հանդեսը լույս է ընծայում հոդվածներ, հաղորդումներ, հրապարակումներ, գրախոսականներ, հոբելյանականներ և հիշատակի խոսքեր:

Հասարակագիտական խնդիրների ներկայացման, քննարկումների և բանավեճերի համար «Լրաբերը» մշտապես էջեր է հատկացրել ոչ միայն

հայրենական, այլև սփյուռքահայ և օտարազգի գիտնականների համար: Տպագրելով հիմնականում հայկական գիտության վաստակավոր գործիչների աշխատանքներ՝ միևնույն ժամանակ խրախուսել է երիտասարդ գիտնականների նորարարական մոտեցումները:

Հենվելով հայ հասարակագիտական մտքի բազմադարյա ավանդույթների և փորձի վրա՝ հանդեսը ձգտել և ձգտում է հրապարակել միջազգային չափորոշիչներին համապատասխանող գիտական հոդվածներ: Հանդեսի խմբագրակազմը առաջնորդվում է գիտական աշխատանքների հեղինակային իրավունքի պահպանման՝ ՀՀ և միջազգային ընդունված չափորոշիչներով՝ չխախտելով գիտական էթիկան և ապահովելով որակը:

Ինչպես վերը նշեցինք, «Լրաբերում» տպագրվող նյութերի մեծագույն մասը վերաբերում է հայոց պատմության և մշակույթի, հայագիտության կարևորագույն խնդիրների լուսաբանմանը: Դրանց թվում հատուկ նշանակություն ունեն հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, հայ հին, միջնադարյան ու նոր շրջանի պատմության, լեզվի, գրականության ու արվեստի հարցերը: Հայոց կորուսյալ հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի, Նախիջևանի, Ջավախքի անցյալի ու ներկայի հիմնահարցերը մշտապես եղել են պարբերականի ուշադրության կենտրոնում: Հանդեսը, լինելով հայ ժողովրդի կենսական խնդիրների խոսափողը, արծարծում է Հայրենիքին և Սփյուռքին հուզող առաջնային հարցերը: Անհրաժեշտ է նշել նաև այն կարևոր իրողությունը, որ հանրապետական գիտական մամուլում «Լրաբերն» առաջինն էր, որ չնայած հասկանալի բարդություններին, սկսած 1988 թ.՝ նախաձեռնեց Արցախի խնդրի, հայ հասարակական-քաղաքական կուսակցությունների պատմությանն ու գործունեությանը վերաբերող հոդվածների տպագրությունը:

Այսպիսով, տասնամյակներ շարունակ պարբերականը լայն հասարակայնությանը ծանոթացրել է մեր ակադեմիական գիտությանը: Անցնելով գիտահրատարակչական մեծ ճանապարհ՝ «Լրաբերը» այսօր էլ շարունակում է իր առաքելությունը:

Շնորհավորում ենք հանդեսի խմբագրական աշխատակազմին ու խորհրդին, հեղինակներին ու ընթերցողներին, ընդհանրապես մեզ բոլորիս այս կարևոր հոբելյանի կապակցությամբ՝ «Լրաբերին» ու նրա աշխատակիցներին մաղթելով երկար տարիների կյանք և նշանակալի ձեռքբերումներ:

ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ